

**Տազնապներ վասն հիշողության-2 կամ աղամորդու այլասերումը  
(Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքան դժվար է» և  
Կարինե Խողիկյանի «Մեկ ժամ հիշողություն» պիեսները)**

**Վալերի Փիլոյան**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-119>

**Հանգուցային բառեր.** գրականություն, հիշողություն, եղեն, անդրադարձ պատմական ճշմարտությանը, կրկնություն

**Նախաբան:** Գիրը ճշմարտության պահապանն է և կեղծիքի առհավատյան: Գիրը հիշողության երաշխավորն է, միաժամանակ կարող է հաստատագրել մոռացումը, որի տարբերակներից մեկն էլ հորինված հիշողությունն է: Հր. Մաթևոսյանն է ասում. «Թուղթը սպիտակ է լինում, հետո ինչ գրում, էդպես հնագանդ էլ սևանում է» [9, 610]: Եվ երկար ժամանակի մեջ կերտվում է հիշողություն, որ կարող է ճշմարտություն, նաև կեղծիք պարունակել: Ինչ ենք ակնկալում մեր մեկուսացող գրից, և ինչպե՞ս ենք պարտադրում մեր հիշողությունը այլոց, բայց և առաջին հերթին մեզ: Հարցը համադրական վերլուծությամբ փորձենք դիտարկել Մ. Իշխանի «Մեռնիլը որքան դժվար է» և Կ. Խողիկյանի «Մեկ ժամ հիշողություն» պիեսների պարունակներում՝ նկատի առնելով նաև մեր օրերի (ան)խորհուրդ, հիշողությունից հրաժարվող իրականությունը:

**Մ. Իշխանի «Մեռնիլը որքան դժվար է» երկը:** Անդրադառնալով Մ. Իշխանի թատերագրությանը՝ բանասիրության դոկտոր Սուրեն Դանիելյանն առանձնացնում է «փորձարար խաղարկումների դրաման» [5, 88] և լավագույն օրինակ է տեսնում «Մեռնիլը որքան դժվար է» երկը, ուր «Խաղարկում են յիշողութիւնը, որը թոյլ է պետականութեան հիւսուած որոգայթներում եւ մանկութիզմին աղերսուող ամերիկեան լինելութիւնը, որը յենագուրկ է առնուագն, պատմական նշանառութեամբ, խաղարկում են նոր քաղաքակրթութեան դռներ թակելու և մտնելու ներուժը, որտեղ Արամեանը եւ Իշխանը պաշտպանում են կորսուող հայկականը՝ վերջին ճիգով» [5, 89]:

Հեղինակը «փորձարար խաղարկումների դրամայի» շրջանակում իր թատերախաղի մեջ ձևավորում է պայմանականություն. ամերիկացի Ջոն Հելլըրի ուղեղը հիվանդ է, տառապում է մանկամտությամբ, իսկ ամերիկաբնակ Ջեյմս Արամյանը ավտոլթարից հետո հիվանդանոցում է հայտնվում մահամերձ, սակայն առողջ ուղեղով: Վիրաբույժ դոկտոր Հարիսընը վկայում է. «Ճոն Հելլըրը հիվանդանոց ներկայացավ մանկամիտ, չըսելու համար անմիտ վիճակով: Քառասուն տարեկանին կը տառապեր ուղեղի կանխահաս ծերութենէ: Հիշողության կորուստ, տրամաբանության քայքայում, ուրիշ խոսքով՝ ուղեղի մտածող կեղևը գրեթէ փչացած» [7, 419]: Եվ՝ «Նույն օրերուն հիվանդանոց կը ներկայանար հիսունի մտ ամձ մը, որուն մարմինը վնասներ կրած էր արկածի մը հետևանքով: Ծագումով հայ այս ամերիկացին՝ Ճեյմս Արամյան, տնտեսագիտության դասախոս, փայլուն իմացականության տեր, դատապարտված էր անխուսափելի մահվան: Ահա այս մարդուն ուղեղն է, որ օգտագործեցինք իբրև պատվաստ» [7, 416]: Մեկ այլ բժիշկ՝ դոկտոր Շեփրսը, մեկնաբանում է. «Ուրիշ խոսքով՝ փրկեցիք իր ուղեղը» [7, 414]: Նյութական աշխարհի ներկայացուցիչը կարող է ասել՝ «փրկեցիք ուղեղը»: Իսկ թե ավելի վերացարկենք՝ ավյուտքի ուղեղը դառնում է այլ երկրների «սեփականությունը», իսկ մարմինը, լեզուն, ոգին կերպափոխվում են, վերածվում այլ գոյի: Արդյունքում «երկու տարբեր անձերու միության բարդ խնդիրը» [7, 415]

ստացավ հետևյալ պատասխանը. «Արամյանի հիշողությունները փոխադրվեցան ճոն Հելլրիի գանկին մեջ» [7, 415]:

Մի առիթով նշել ենք, որ կա մարդու հիշողություն, ազգի հիշողություն և մարդկության հիշողություն [13, 128]: Իշխանի ստեղծած պայմանականության մեջ «մեր ազգային մտածողութեանը ուղղուած 20-րդ դարի մարտահրաւերը, բարձրացնում ու առանցքային գիծ է դարձնում մարդու հիշողութիւնը՝ որպէս պարտադիր նախապայման հայի և ընդհանուր աշխարհի, ճշմարտութեան և տեսլականի, կեանքի ու երազի բախումներում» [1, 89-90]: Սակայն Իշխանի երկում մարդու հիշողությունը հավակնում է դառնալ այլ մարդու հիշողություն, որ չի դառնում մարդկության հիշողություն: «Ուղեղի պատվաստը» կամ ուղեղի օրինականացված գոդությունն իր հերթին ենթադրում է հիշողության գոդություն կամ մեխանիկական փոխանցում: Թե ով է Արամյանի ուղեղից և Հելլրիի մարմնից կոնտամինացված այս նորված գոյը, հետո կանդրադառնանք: Հելլրը «ուղեղի փոխանակություն» կամ «ուղեղի սեփականացում» [7, 433] իրականացրեց, իսկ Արամյանը, որ կորցրել է իր մարմինը, կարծում է, թե եկել է երկնային արքայություն մեկնելու իր երկրային ժամանակը: Արամյանը, հայի բնավորության հանգույն, իր հետ երկնային թագավորություն է տանում գներն ընկած «քանի մը արժեթուղթեր», «դրոշմաթուղթերու հավաքածու» և «կարևոր ուսումնասիրություն մը – «Հայկական ցեղասպանությունը տնտեսական տվյալներու լույսին տակ»» [7, 411]՝ երկրային արժեքներ, որ անպետք են երկնքում, քանի որ Արամյանը երկնային տնտեսագիտություն չի ուսումնասիրել:

Պետրոս առաքյալի և Արամյանի գրույցը ընթերցող-հանդիսականին շատ իրողությունների է հասու դարձնում. «Դուք հայերդ առհասարակ կ'աճապարեք Երկնից Թագավորության քաղաքացի դառնալու: Եղավ ատեն մը, որ մեկ անգամեն միլիոններով եկաք. դժվարություն ունեցանք տեղավորելու» [7, 410]: Եվ Արամյանի պարզաբանումը. «Մենք չենք աճապարեք, վարը մարդիկ կան, որ մեզ աճապարել տվին»:

Պետրոս առաքյալը պիտի ընդունման-մուտքի թույլտվության գործողություն իրականացնի ուսումնասիրելով Արամյանի տոմարը «անձնական գործը». «Մեծ հայրը՝ Հայկազ Արամյան ընտանիքի անդամներուն մեծամասնության հետ նահատակված է Տեր-Ձորի ճամբաներուն վրա՝ հանուն հավատի և հայրենյաց», «Մեծ մայրը, վերապրող իր միակ զավկին՝ Ռուբենի հետ հաջողած է Ամերիկա անցնիլ, ուր Ռուբեն տարիներ շարունակ գործարանի մը մեջ աշխատած է իբրև բանվոր» [7, 426], «Ռուբենի տղան՝ Ճեյմս Արամյան մեծ դժվարությամբ և ճակտի քրտինքով հաջողած է համալսարան ավարտել» [7, 426]: «Կ'ամուսնանան բնիկ ամերիկացի աղջկան մը հետ» [7, 427], «Արկածի ենթարկվելով՝ տառապալից վիճակի մեջ անկողին կ'իյնա», «Բժիշկներու կատարած բոլոր դարմանումները անօգուտ կ'անցնին և Արամյան կը տարուբերի կյանքի ու մահվան միջև» [7, 428]:

Վիրահատական միջամտությունից հետո Արամյանի մարմինը մահացած է: Սովորաբար ասում են, թե մեռած է, բայց թաղված չէ, այնինչ աստ. «Թաղված ես, այո՛, բայց չես մեռած», որովհետև «Հոգին ավանդած պահուն Արամյան իր ուղեղը տված է ամերիկացի գործատեր-առևտրական ճոն Հելլրին, որ մտքի աղքատությամբ կը տառապար» [7, 428]:

Արամյանը չի ցանկանում երկիր վերադառնալ. «Այս բարձունքներու մաքուր օդը շնչելէ ետք, Արքայության սրբաշունչ մթնոլորտին քավելէ ետք, բոլոր հոգսերս ու ցավերս թոթափելէ ետք, ես ինչպե՞ս երկիր դառնամ...» [7, 412]:

Պետրոս առաքյալը կարծում է, թե «մարդ ուղեղով է մարդ», և ներս չի ընդունում Արամյանին: Ըստ Պետրոս առաքյալի՝ Արամյանը չի մահացել, այդ պատճառով էլ վաղաժամ է երկնային թագավորություն նրա մուտքը, իսկ Արամյանն էլ կարծում է, որ «Ուղեղն ալ մարդով է ուղեղ» [7, 428]: Եթե ուղեղ բառը փոխարինենք հիշողություն բառով,

ապա կստանանք «մարդը հիշողությամբ է մարդ» և «Հիշողությունն էլ մարդով է հիշողություն» դրույթները: Ասվածը նրանով է հիմնավորվում, որ Հելլըր տեր է դառնում նաև Արամյանի հիշողություններին, դրանք համարում իրենք: Այնինչ Արամյանի մարդկային հիշողությունը կրում է նաև ազգային հիշողությունը:

Եվ կարևորվում է «ուղեղը լվալու» խնդիրը՝ քաղաքակրթության (և քաղաքակրթության) ձեռքբերումներից մեկը: Իսկ այդ «ուղեղ լվալու գործողությունը բավական երկար ժամանակի կը կարոտի» [7, 417], այնինչ նորոգված Հելլըրը խոսում է. «<...> ես գաղթական և տառապած ընտանիքի զավակ եմ, վարժ եմ ցավերս կրելու» [7, 418], «<...> աշխարհիս տագնապները չեն լուծվիր, էթե փոքր ազգերու դատին լուծում չգտնվի: Եվ ամենն ատաջ հայ ժողովուրդի արդար դատին» [7, 419]: Շատ հաճախ Հելլըրի միջից Արամյանն է խոսում. «Այս խեղճ Հելլըրը պետք է օր առօր մարդ դարձնեն» [7, 437], կամ՝ «Ես գաղթական և տառապած ընտանիքի զավակ, մեծ դժվարություններով տեղ հասած» [7, 445]: Ս. Դանիելյանի կարծիքով՝ «Իշխանը հայտնում է իր անտարբեր վերաբերմունքը ամերիկեան տիպի անկարելի վերափոխման առիթով: Այդ փոփոխությունը միայն ֆիզիքական է, նրա բարբառանքները ցեղասպանության, ժողովրդի իրատուների խորհուրդների սահմանագծում ներկայացնում են Արևմուտքի անտարբերությունն ու անհաստղությունը, որ մեր կարծիքով, փորձարարական դրամայի գլխաւոր մեխն է» [5, 89]:

Թերևս այստեղից է ձևավորվում երկի կոնֆլիկտը. «<...> տեղի անտեղի Հելլըր կը կրկնե, թե ինք գաղթական ընտանիքի զավակ է, թե ծնողները տառապած են, թե մեծ դժվարություններով տեղ հասած է» [7, 418], «<...> ներկայիս ամենն շատ Հելլըրի մտքին հաճախող գաղափարը փոքր ժողովուրդներու դատին արդար լուծումն է և հայ ժողովուրդի կրած ցեղասպանության հարցը» [7, 416]:

Ժամանակ անց տագնապ կա Հելլըրի ընտանիքում՝ կնոջ՝ Անիդայի և մոր մոտ.

«Անիդա.– Ծնը տանջողը Արամյան ինքն է:

Մայրը.– Ինչպե՞ս թե Արամյան ինքն է:

Անիդա.– (Խորհրդավոր) Այո, Արամյան չէ մեռած:

Մայրը.– Դո՞ւն ալ սկսար խենդ բաներ ըսել. ուղեղը հանված մարդը ողջ կը մնա՞:

Անիդա.– Ողջ է և այս տան մեջ կ'ըջի:

Մայրը.– Հիսուս Քրիստոս, ես շատ կը վախնամ ուրվականներե...» [7, 468]:

Եթե Հելլըրը վիրահատական միջամտության արդյունքում ստացավ Արամյանի ուղեղը՝ «պարունակյալը պարունակ փոխեց» [7, 430], ապա Արամյանի ուղեղը պահպանեց Արամյանի գենետիկ հիշողությունը, ասել է՝ «պարունակյալը պարունակ չփոխեց»: Ավելի ընդգրկուն տեսնելով խնդիրը՝ պարզ է դառնում, որ գենետիկ հիշողությունը չի դառնում մարդկության ընդհանուր հիշողության բաղկացուցիչ, ինչն էլ հայոց անցյալից արտածված, ներկայումս բնավորված և ապագայի հետանկարը չորաշակիացնող բարդույթի արտահայտությունն է:

Քանի որ մարդիկ «մարդիկ սկսան ավրշտկել Աստծո ձեռակերտ արարածներն ալ» [7, 429], ձևավորվել է «հրեշային խառնուրդ» [7, 429]: Այդ պատճառով էլ Արամյանը ո՛չ ապրողների ցուցակում է, ո՛չ մեռյալների. «Պիտի թափառես երկրի և երկինքի միջև» [7, 431]: Հաստատապես «Ոչ ապրելն է մի բան, ոչ մեռնելը» (Համո Սահյան):

Տխուր սրտի մխիթարանք է դառնում Պետրոս առաքյալի հորդոր-ապսպրանքը. «Քու մահդ իրեն համար նոր կյանք եղավ աշխարհի երեսին: Պիտի սպասես, որ իր մահն ալ քեզի կյանք ըլլա երկինքին մեջ», իսկ Արամյանի մեջ խոսում են ազգային մտածողությունն ու բարոյական սկզբունքը. «Ես չեմ ուզեր իմ կյանքս իր մահվան հետ կապել» [7, 431]: Էջեր անց իր գնացական վիճակին (ապրելուց հետո մեռնելուն) հասնելու համար Արամյանը պատրաստ է ինքնասպան լինել. «Եթե ուզեմ իսկ անձնասպան ըլլալ՝ չեմ կրնար: Անձնասպան

ըլլալու համար պետք է մարդասպան դառնամ և սպանեմ ճոն Հելլըր կոչեցյալը» [7, 470]:

Մեղավորը հայն է: Այդ են վկայում Պետրոս առաքյալի մեղադրանքները.

1. «Արամյան ճեյմս: Ինչու տեր չեղար ուղեղիդ»:

2. «Հէի՞ր գիտեր, թե քու նախնիներուդ քեզի թողած լավագույն ժառանգությունն էր ատիկա»:

3. «Արամյան ճեյմս, պիտի կրես հետևանքները» [7, 432]:

Հայի տագնապներին ևս մեկն ավելացավ. նմանատիպ իրավիճակում փաստորեն արգելվում է հայի մուտքը երկնային արքայություն, արգելվում է մեռնելը:

Երկիր, հավաքականություն, նյութական ու հոգևոր մշակույթ, լեզու, ուղեղ ու հիշողություն կորցնելուց զատ կա նաև հոգին կորցնելու տագնապը, որ բարձրաձայնում է ուսուցիչը. «Մարմինդ կորսնցուցիր, լեզուն կորսնցուցիր, ուղեղդ կորսնցուցիր. կը մնա միայն հոգիդ... Գիտե՞ս արդյոք թե հոգիի գողեր ալ կան: <...> Հոգեվաքքիդ մեջ զգաստ պիտի ըլլաս, քունիդ մեջ՝ արթուն և մահվան մեջ՝ կենդանի, տեր կանգնելու համար քու էությանդ» [7, 454]: Մեր կեցության մեջ էական է մենության հարյուր (կամ մի քանի հարյուր) տարին, որ ազդել է նաև էության ու բնավորության վրա: Մնացել է մի բան՝ ձևակերպված մեկ այլ արձակագիր-թատերագրի կողմից. «Բայց զլուխ բարձրացնելու տեղ չի մնացել, բացի երկնքից, բացի Աստուծուց... Եվ մենք այդպես՝ գլուխներս դեպի վեր, դեպի Բացարձակը, գոյում ենք երկար ժամանակ՝ սպասելով երկնային արքայության...» [1, 312]:

**Կարինե Խողիկյանի «Մեկ ժամ հիշողություն» պիեսը:** Մուշեղ Իշխանի թատերախաղը եզրափակվում է «Մեռնիլը որքան դժվար է» թերասացությամբ, ուրեմն խնդիրը չի լուծվել, և ռուս դասականի «ի՞նչ անել» հարցումն էլի պատասխան է ակնկալում: Մուշեղ Իշխանի «փորձարարական դրամայի» մի արտահայտություն էլ «Մառնարանեն ելած մարդը» (1979) թատերախաղն է, ուր 20-րդ դարի վերջին անբուժելի հիվանդ Թոմին սառնցնում են, մինչև մասնա մաս տարբերակ գտնվի, ինչը տեղի է ունենում հարյուր տարի անց: Իսկ ներկայից ապագա ժամանակային անցման փոխարեն Կարինե Խողիկյանի «Մեկ ժամ հիշողություն» պիեսում, որ նույնպես փորձարարական դրամա է, տեսնում ենք ներկայից անցյալ և անցյալից ներկա ժամանակային փոխանցումները, և պարզ է դառնում, թե ի՞նչ կարելի է վերստեղծել հայ, հիշողություն, եղեռն, վիրաբուժություն... բաղադրիչներով:

Դրամայի «գործողությունը կարող է կատարվել Թուրքիայի ցանկացած քաղաքում, մեր օրերում» [8, 5], սակայն կատարվում է Կարինե քաղաքում, որի մասին ասվում է. «Այս քաղաքը հիշողություն ունի» [8, 10]: Պիեսի վերնագիրը ճիշտ հասկանանք. սա ոչ թե հուշերի մեկժամյա տևողություն է, այլ նախնիների վերադարձ աղջնակի տեսքով ներկայացող մեծ տատի ուղեկցությամբ ու միջնորդությամբ: Հարյուրից ավելի տարիներ առաջ եղած իրականության սահք է ոչ վաղ ներկա աղջնակի միջոցով: Աղջնակը Անդրեի մեծ տատն է՝ միակ փրկվածը այդ ընտանիքից, միջնորդը տարբեր սերունդների միջև և կապող օղակը, ըստ էության հիշողության կրիչը: Անդրեի մասնակցությունը գիտաժողովին ընդամենը միջոց է՝ գոնե մեկ ժամ հիշողության տեսքով վերադարձնելու պատմական ճշմարտությունը: Անդրեի հիշողությունն է վերակերտել մեծ տատին՝ Ջապել աղջնակի տեսքով, որի օգնությամբ էլ «վերադարձել է» 1915-ին փողոտված ընտանիքը: Արամ մեծ պապի և Ջապել տատի օրինական մերձեցումից սկզբնավորված սերունդների հերթական օղակն է Անդրեն, որ ցանկանում է ոչ միայն առերեսվել հիշողության հետ, այլ նաև հիշողությունը հասու դարձնել այլոց:

Հիշողության խնդիրներին նվիրված գիտաժողովին Անդրեն ներկայացել է որոշ հապաղումից հետո, սակայն եկել է, քանի որ արյան, գենի թե ուղեղի ինչ-որ ծալքերում եղած հիշողության կրիչը հանգիստ չի տալիս նրան:

Գիտաժողովի նպատակի վերաբերմամբ կերպարներից Մարի Դեշանելն ընդ-

հանրացնում է. «<...>բոլորը կենտրոնացած են հիշողության վրա: Ամեն ինչ հանուն հիշողության» [8, 10]:

«Մեկ ժամ հիշողությունը» կարելի է թարգմանել «մեկ ժամ վերապրում» կամ գենետիկ հիշողության վերապրում, որ տեղի է ունենում ժամանակային անցումների կամ փոխանցումների միջոցով, ինչը հաճախադեպ է արդի արվեստի տարբեր արտահայտություններում: Նման օրինակ է հիշվում՝ կապված Լ. Պիրանդելլոյի «Հենրի Դ» պիեսի հետ [6, 107]: Հավելենք Մ. Տվենի «Կոնսենկտիկոտցի յանկին Արթուր թագավորի արքունիքում» վիպակը, Ռեյ Բրեդբերիի գործերը, ընդհանրապես գիտաֆանտաստիկ կոչվող գրականությունը:

Այնուամենայնիվ մենք՝ հայերս, անուղղելի ժամանակներ ենք, երբ կարծում ենք, որ կարող ենք ինչ-որ բան փոխել մեր դեմ ոճրագործածի հիշողության մեջ: Անդրեն կարծում է, թե «նրանք կարողացել են իրենց մոռացնել տալ, չեն հիշում, որովհետև իրենց հիշողությունից ջնջել են իմ ընտանիքի հետ կատարվածը» [8, 27], այդ պատճառով էլ ցանկանում է նրանց «ամբողջ ազգուսակի քնած հիշողությունն արթնացնել» [8, 27]: Նրանք հիշում են իրենց նախնիների իրականացրած ոճրագործությունը, բայց չեն ուզում խոստովանել անգամ իրենք իրենց<sup>1</sup>: Հիշենք Անդրեի պատմության այն հատվածը, որ վերաբերում է պատահաբար հանդիպած ապահովագրական գործակալին. «<...> ինքս էլ չիմանալով՝ ինչու, նրան պատմում եմ մեծ պապի պատմությունը: Սկզբում լսում էր մեծ հետաքրքրությամբ, հետո... հայացքը սրվեց, լարվեց ամբողջ մարմնով... Ու հանկարծ ասեւ թեք երեսիս. «Մո՛ւտ է, այդպիսի բան չի եղել»: «Ինչպե՞ս թե,– կարկամեցի,– ընտանիքիս պատմությունն ու ես կենդանի վկայություն ենք...»: «Իսկ ես ասում եմ, որ սո՛ւտ է, հերյուրանք, դուք եք հորինել՝ ձեր ազգի պարտությունը մեզ վրա բարդելու համար» [8, 26]:

Եվ նրանք արդեն հազար տարի փորձում են ընդամենը մի բան հիշել՝ «գործ գայլի» հոգեբանությունը, իսկ այդ հոգեբանությունը քաղաքակրթության հետ կապ չունի. դա գայլի՝ հոգեբանություն է: Ախր քո իրավ դասականն այդ մասին գրել է իր «Մեծամոր» խոհագրության մեջ, իսկ մեկ այլ դասական՝ Հակոբ Օշականը՝ «Մաթիկ Մելիքխանյան» վեպում, և բազմաթիվ այլ դասական-գրագետներ: Մենք դաս չենք առնում մեր դասականներից, ուրեմն՝ մենք էլ անկիրթ ենք: Իսկ նրանց մոտ անգամ եվրոպական կրթությունը բան չի փոխում: Չի փոխում անգամ «արյան մաքրագործումը»: Ասում են՝ նրանք փոխվել են իրենց գենետիկ, նրանց դնթ-ն փոխվել է 98 տոկոսով, սակայն այդ մնացորդ թվացող 2 տոկոսը ավելի գորեղ է. «ներկրված» հայ-հույն-արաբ-սլավոն... և այլ արյուն-դնթ-ները անգոր են ինչ-որ բան փոխել:

Անդրեի ասածը, արածը և պիեսում պատկերվածն առաջին հերթին ինքնության փնտրտույք է, ազգային հիշողության որոնում, որ երբեմն ուզում ենք այլ մարդկանց հասու դարձնել: Անդրեի ձևակերպումը՝ «ուզում եմ վիրահատել մարդկային հիշողությունը» [8, 25], պիեսի կարևոր լեյտմոտիվներից է, որ նորից է արծարծվելու. «Մեկս մյուսիս ենք փոխանցել այդ անիմաստ ցանկությունը՝ կողքիդ ապրողներին՝ հարազատ լինի թե պատահական մեկը, պատմել ու դեմ առնել անհասկացող հայացքի կամ, լավագույն դեպքում, թուլեական կարեկցանքի: Իսկ ավելի հաճախ տեսնել, թե ինչպես են նրանք թողվում ուսերն ու մտքում իրենց հարց տալիս՝ ինչքան կարելի է հետ նայել՝ այսօրն ու վաղը թողած...» [8, 26]:

---

<sup>1</sup> Ասես ակամա այս տեքստին հավելվեց Գրիգոր Ջանիկյանի «Ակնա հինգ հայրեն» գրության ավարտամասը: Ակնը տեսած, հուզված հեղինակը գրում է. «Ջահել կառավարը սրտաշարժվեց. – Ինչի՞ ես լալիս, բարեկամ,– արի տանեմ մեր տուն, ինչքան ուզում ես ապրի, ես դրախտը վայելի: –Ես մե՛ր տունն եմ ուզում,– ասացի: –Ինչի, էստեղ հայե՛ր եմ ապրել». ԳԹ, թիվ 4 (3545), 25 փետրվարի, 2022:

Հայրուրամյա հեռվից նման հարց տալիս են նաև մեզինց ոմանք՝ այդ կերպ հաստատելով, որ ամենակուլ ժամանակը խժռում է մարդկային հիշողությունը: Մա էլ ուղեղի լվացման մի տարբերակ է, որ մահ է, քանի որ «մահը դարանակալ չի սպասում առջևը՝ մի տեղ, այլ հուշիկ, գոյության հետքերը ջնջելով՝ գալիս է թիկունքից և երբ հասավ քեզ, առջևում ոչինչ չի լինելու» [11, 340]:

Մայրը Առլեն Ավագն այս իմաստով ընդդիմախոսում էր՝ փորձելով սթափեցնել մեր տեսակին. «Արևմուտքի մարդիկ ի վիճակի չեն քեզ հրամցնել իրենց համար ձանձրալի դարձած խղճահարությունը քո քրիստոնեությունից, քո կոտորածներից, քո փնթփնթոցներից, քո գոյությունից» [4, 259]: Իսկ Լ.-Չ. Սյուրմելյանը փաստում էր. «Ամբողջ պատմությունը, կրկնում եմ, չի պատմվել ու չի էլ կարելի պատմել: Մեռելները ոչինչ չեն պատմում, իսկ վերապրողները տակավին մտնջ են: «Մուսա լեռան քառասուն օրերը» հայի կողմից չգրվեց: Վերապրողներս ցրվեցինք աշխարհի չորս ծագերը ու դեռ թաքցնում ենք մեր վերքերը: Մենք վարպետ ենք ինքնախաբեության մեջ: Դիմակավորումն անհրաժեշտ է մեր հավասարակշռության և առօրյա գործերի բնականոն ընթացքի համար Լուս-Անջելոսում կամ Նյու Յորքում, Բուենոս Այրեսում կամ Սան-Պաուլոյում, Փարիզում կամ Բեյրութում: Մենք կարող ենք գայրությունը խոսել օրվա այս կամ այն լուրի առթիվ, բայց ոչինչ չասել մեզ ամենից ավելի մտատանջող բաների մասին, ծպտուն չհանել: Տարագիր հայը լի է չասված խոսքերով, ու նրա մեջ մեծ լռություններ կան: <...> Արևմուտքում, պետք է ասեմ, մոռացված ազգ ենք մենք: Վերջերս, երբ Անգլիայից եկած մի գիտնական լսեց, թե հայ եմ, ասաց՝ «Անհետացող մի ցեղ»» [12, 7-8]:

Կ. Խողիկյանի պիեսում մեռյալները խոսում են 100 տարի անց, որովհետև նրանց զարմի ընձյուղ Անդրեն փորձում է դուրս գալ իր մնջությունից: Այս իմաստով ուղղակի անհասկանալի է ձևակերպումը. «<...> շերտ առ շերտ բացահայտվում է Անդրեի կենսագրությունը, **վերականգնվում է** նրա գենետիկ հիշողության **խաթարվածությունը**» [8, 395]: Թերևս պիտի լինի խաթարված հիշողությունը:

Դառնանք պիեսին: Անդրեն պատմում է իր ընտանիքի համառոտված պատմությունը՝ հար և նման Մուշեղ Իշխանի պիեսի Արամյանի պատմությանը՝ մեկ սերնդի հավելմամբ. «<...> մեծ պապիս ամերիկյան որբախնամ կազմակերպությունը տարավ Ամերիկա» [8, 24-25], «Մեծ պապս անգլերեն չգիտեր, տան մեջ միայն երկրի լեզվով էին խոսում: Նրա որդին՝ իմ պապը, ազատ խոսում էր անգլերենով ու մի քիչ՝ իր լեզվով: Մեծ պապիս թողը՝ հայրս, մի քանի բառ ու նախադասություն գիտեր ու դրանք ինձ չսովորեցրեց, հիմա մտածում եմ, գուցե պատճառը անգլուհի մայրս էր...» [8, 25]:

Ավագ եղբոր (որ անցյալից ներկայացած նահատակվածներից է) կարծիքով Անդրեն մոլորվել է հիշողության և ատելության միջև, ու կարևորում է սերունդների տարբերության հանգամանքը. «Գնացքում հանդիպած այդ մեկը քո կարկցանքին էր արժանի, ոչ թե ատելությանը: Դու պիտի ատես նրա մեջ պապին, ով գուցե եղել է քո գերդաստանի դահիճը, բայց նրա ծոփն պիտի խղճաս... Ու նա պիտի զգա, որ խղճում էս իրեն, որովհետև քո արյան մեջ զոհի հիշողությունն է, իսկ նրա արյան մեջ՝ դահճի ամոթը: Այսօրվա կարեկցանքը քեզ պիտի ուժ տա, որ չմոռանաս անցյալի ատելությունը» [8, 31]: (Միջանկյալ՝ ծոփն էլ խղճալու բան չէ):

Մերունդների տարբերությունից զատ կա նաև սերունդների հերթագայության հանգամանքը, որ շեշտվում է ոչ միայն այս պիեսներում, այլ նաև Մայրը Առլեն Կրտսերի «Դեպի Արարատում». «Մեր ճամփորդությունից հետո շատ հաճախ եմ մտածում հորս մապին, թեև երագում շատ հազվադեպ եմ տեսնում նրան: Հիշում եմ, շատ վաղուց պատմել էր ինձ իր երագի մասին՝ միակ անգամը, երբ նկարագրել էր տեսած երագը: Նկարագրել էր

մոայլ դժկանությամբ, երբ վատ էր քնում՝ հաճախ քնի մեջ խոսելով ու արթնանալով: Երազն *հր* հոր մասին էր: Գիտեմ, ճիշտ այնպիսին էր, ինչպես իրեն հիշում էի երեխա եղածս ժամանակ,- ասաց այդ առավոտ հայրս:- Բացի մազերից, որ սպիտակ էին ու խիտ: Երկարափեշ վերարկուով էր ու պողպատաշրջանակ ակնոցով: Մեր տան ճանապարհին կանգնած խոսում էր հետս, կանչում էր ինձ: Բայց հայերեն էր խոսում, ու ես ոչինչ չէի հասկանում:

Երբեմն մտածում եմ, թե ժամանակի խզված շրջանակն է, որ հետագայում բացվում ու վերաբրորվում է» [2, 234]: Պապ-հայր-որդի սերունդների վերաբրորվող ու ամբողջացող շրջանակ, որ մեկուսացման մասին էլ է վկայում: Իսկ մեկուսացումից դուրս գալիս անխուսափելի կուրուստներ էլ են արձանագրվում կամ ենթադրվում. հաճախ հայտնվում են ոչ քո համակեցության մեջ, վերաձևվում են օտարի: Եվ ինչքան էլ Անդրեն որոշի ապագա աղջնակին անվանակոչել Կարին, հեռու թե մոտ Ամերիկայում այն հնչելու է Քերրն:

**Ընդհանրացումների փոխարեն:** Եղեռնը, նրա մասին հիշողությունը, անկամք և անպատրաստ հակառակությունը դրան արդեն դարձել են հայ մարդու և հայ տեսակի հավաքական անգիտակցության բաղադրիչ: Այդ անգիտակցականից «վերադարձը» գիտակցություն հաճախ ձևավորում է նմանատիպ արդյունք ու վերաբերմունք, և տեղ է գտնում համազգային անլիարժեքության բարդությ, որ նույնպես եղեռնի անմիջական արդյունք ու հետևանք է, այլ ոչ թե ազգային բնավորության գիծ: Այս բարդությն ամենօրյա ներկայություն է և ավելի սարսափելի հետևանքներ ունի այսօր՝ արտագաղթի, ինքնօտարման տեսքով, գլոբալացման պարտադրանքներով, երբ քեզ պարտադրում են պարտվածի հոգեբանություն, և դու քեզ պարտադրում ես ուրացում:

Մենք տագնապում ենք մարդկության հիշողության համար, սակայն **ամենամեծ տագնապը կապվում է մեր անձնական գեներտիկ հիշողության հետ**, քանի որ ամեն անգամ մոռացումը կրկնություն է բերում, ամեն անգամ աղճատում է մեր հիշողության քարտեզը, բնական ու նախաստեղծ ներդաշնության յուրաքանչյուր խախտում հուշում է, որ մարդը հակադրվում է արարչական սկզբին, և Մուշեղ Իշխանի պիեսից Սուրհանդակը հիշեցնում է ըստ էության գլոբալացման և գիտության անասելի զարգացումից տագնապ. «Վարը, երկրին վրա հրեշային բաներ կը կատարվին, մարդոց ուղեղները սկսած են իրարու պատվաստել, նոր մարդ շինել: Ժողովականները հուշագիր պիտի ներկայացնեն Բարձրալիյն բողոքելու համար եղածին դեմ: Պիտի հիշեցնեն որ իր շունչն է շունչ ունեցող աղամորդիները այլասերելու վրա են» (7, 455): Մարդը գործունեություն է իրականացնում, որ միայն ու միայն Արարչին է կամ բնությանը վերաբերող ասպարեզ է, և յուրաքանչյուր «ձեռքբերում» իր հետ բերում է հակադեցություն: Հակադեցության տարբերակ է դառնում մոռացումը, ուղեղի լվացումը: «Այժմ Հայաստանում գոյացել է հասարակական մի շերտ, տգետ ու միամիտ, ինքնապաշտպանության բնագոյը իսպառ կորցրած սովոր մի զանգված, որը հավատում է ներկա կառավարության «հանդուրժողականության», «խաղաղ գոյակեցության», «առանց նախապայմանների» հաշտության բարբառանքներին, ու պատրաստվում է տրվել, ընդառաջ գնալ այդ խաբեությանը՝ մերկ ու անպաշտպան դաշտում արածող ոչխարի պես» [3]:

Այնինչ այդ մասին նախազգուշացրել է հայոց բանաստեղծության հսկան.

«Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ  
Զարմանալի՜ թեթև, զարմանալի՜ անդեմ՝  
Մերկության պես տկոյր ու անանցյալ...  
Այդ մե՛նք ենք երևի այն ուղտը հաստակող,  
Որ Հիսուսի առակին հակառակ –  
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝  
Ապագայի դրախտը անարատ...»

Այդ մե՛նք ենք երևի այն հարուստը,  
Որ անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ-  
Պիպի ժառանգենք մեր դարերի կորուստը,  
Որ բոլո՛ր տկլորներին սահմանված է վերուստ...» [10, 215]:

Մտածենք մեր վաղվա մասին՝ չկորցնելով և այդ վաղվան փոխանցելով ազգային հիշողությունը:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2024.1-119>

### **Գրականություն**

1. Այվազյան Աղասի, Եղած չեղածը՝ մի կյանք, Եր., Գրակ. և արվեստի թանգարանի հրատ., 2005:
2. Առլեն Մայքլ (Կրստեր), Դեպի Արարատ, Ե., «Նաիրի» հրատ., 2000:
3. Ավետիքյան Հ., «Ազգ», 9 սեպտեմբեր, 2022, թիվ 32 (5720):
4. Դանիելեան Ս., Միջուկի տրոհումը: Սփյուռքահայ գրականության պատմություն. Գիրք 1: Ներածություն, Ե., Զանգակ-97, 2011:
5. Դանիելեան Ս., Մուշեղ Իշխանի փորձարարական քայլերը թատերգության մեջ, Մուշեղ Իշխան. միջազգային գիտաժողովի զեկույցներ, Ե., Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2021, էջ 86-91:
6. Թիւֆէնքճեան Վիգէն, Տարաբնակ մարդը Մուշեղ Իշխանի թատերախաղերուն մեջ, Մուշեղ Իշխան. միջազգային գիտաժողովի զեկույցներ, Ե., Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2021, էջ 102-111:
7. Իշխան Մուշեղ, Երկեր, Ե., «Նաիրի» հրատ., 1990:
8. Խողիկյան Կարինե, Մեծ եռագրություն. թատերախաղեր (գիրք 2), Ե., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 2015:
9. Մաթևոսյան Հրանտ, Վիպակներ, Ե., «Նաիրի» հրատ., 1990:
10. Չարենց Եղ., Երկերի ժողովածու, հտ. 4, Ե., Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1968:
11. Միրադեղյան Վանո, Դուռը, Ե., հեղինակային հրատարակություն, 2021:
12. Մյուրմելյան Լ.-Զ., Ձեզ եմ դիմում, տիկիննե՛ր և պարոննե՛ր, Ե., «Մով. գրող» հրատ., 1980:
13. Փիլոյան Վ., Ժամանակի ձայները, Ե., «Լուսակն» հրատ., 2012:



**Тревоги о воспоминаниях-2, или вырождение детей Адама  
(пьесы Мушега Ишхана «Как трудно умереть» и  
Карине Ходикян «Один час воспоминаний»)**

*Валерий Пилюян*

**Резюме**

**Ключевые слова:** литература, память, геноцид, обращение к исторической правде, повтор

Письменность выступает как поручитель памяти, и в то же время она может зафиксировать забывание, одним из вариантов которого является вымышленная память. Память, которая может содержать как правду, так и ложь, формируется во времени. Что мы ожидаем от нашей изолированной письменности и как мы навязываем свои воспоминания другим, но прежде всего самим себе? Этот вопрос рассматривается с применением метода сравнительного анализа в пьесах Мушега Ишхана «Как трудно умереть» и Карине Ходикян «Один час воспоминаний», с учетом действительности наших дней. В произведении М. Ишхана память человека претендует на то, чтобы стать памятью другого человека, но не становится памятью человечества. В пьесе К. Ходикян «Один час воспоминаний» происходят хронологические трансформации из настоящего в прошлое и из прошлого в настоящее, воссоздается новая условность с компонентами «армяне», «воспоминания», «геноцид», «хирургия». То, что говорит персонаж, что он делает и что изображено в пьесе – это прежде всего поиск идентичности, поиск национальной памяти, потому что геноцид и память о нем, иногда невольное и неподготовленное противодействие ему уже стали компонентами коллективного бессознательного армянского народа, присутствуют повседневно и в настоящее время имеют ужасающие последствия в форме эмиграции, самоотчуждения, принудительной глобализации. Нас вынуждают к психологии побежденного, а мы отрекаемся от самих себя. Наибольшее беспокойство вызывает наша личная генетическая память. Забывание приводит к повтору. Давайте подумаем о нашем завтрашнем дне, без потерь передав будущим поколениям нашу национальную память.

**Alarms for Memory Sake -2 or the Degeneration of Man  
(Based on the Plays “To die is so hard” by Moushegh Ishkhan and  
“An Hour Memory” by Karine Khodikyan)**

*Valeri Piloyan*

**Summary**

**Key words:** *literature, memory, genocide, reference to historical memory, repetition*

Literature, being the guarantor of memory, at the same time can confirm oblivion, one of the versions of which is the invented memory. Memory is formed in time and may contain truth as well as falsehood. What do others expect from the literature: how do we impose our memory on others but first of all on ourselves? We've observed that issue with a comparative analysis of the plays “To die is so hard” by M. Ishkhan and “An hour memory” by K. Khodikyan, taking into consideration the reality of our days. In M. Ishkhan's play, a person's memory pretends to become another person's memory, which doesn't become humanity's memory and concern. In K. Khodikyan's work, there are some temporal penetrations from the present to the past and from the past to the present accordingly, and a new conventionality is recreated with the such components as Armenian, memory, genocide, surgery, etc. The character's words, actions and deeds along with what is depicted in the play are first of all the real search for identity, the very search for ethnic memory, because the genocide, the memory of it, sometimes the unwilling or unprepared opposition to that memory have already become a component of the collective unconsciousness of the Armenian man, which feels like something with a daily presence, nowadays expressed with a horrible consequence in the form of emigration, self-estrangement with the compulsion of globalization. We are forced into a loser's psychology, as well as to its denial. Today, the greatest concern is closely connected with our personal genetic memory. Oblivion inevitably brings repetition. Let's think about our future, passing on our ethnic memory to future generations without loss.

Ներկայացվել է 13.10.2023 թ.

Գրախոսվել է 27.10.2023 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.